ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

15.09.2023 թ.

ԱԲՀ-ն կարևորելով իր շրջանավարտների կարծիքը կրթության որակի բարելավման գործընթացում՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին շրջանավարտների շրջանում անցկացնում է հարցում՝ բացահայտելու և գնահատելու նրանց բավարարվածությունը ստացած կրթությունից:

2022-2023 ուստարվա շրջանավարտների շրջանում Ուսումնական մասի վարիչի և Որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից ավարտական ամփոփիչ քննություններից անմիջապես հետո՝ հուլիս ամսին, իրականացվեց առցանց հարցում:

Հարցման նպատակն էր՝

1. Բացահայտել և գնահատել ԱԲՀ շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթության որակից:
2. Բարելավել ԱԲՀ կրթության որակն ու մատուցվող կրթական ծառայությունները:

Հարցման գործընթացի կազմակերպումը

Հարցումն անցկացվել է առցանց՝ Google Forms ծրագրով: Հարցաշարը լրացվել է անանունության սկզբունքով:

2022-2023 ուստարում ԱԲՀ-ն ավարտել են «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի 5-րդ և «Բուժական» ֆակուլտետի 6-րդ կուրսերի 117 ուսանող:

Հարցմանը մասնակցել են 117 շրջանավարտներից 70-ը /60 %/:

Ստորև ներկայացնենք հարցադրումներն իրենց արդյունքներով.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նշեք Ձեր սեռը





ԱԲՀ 2022-2023 ուստարվա շրջանավարտների թվում ինչպես նախորդ ուստարում, այնպես էլ այս՝ մեծամասնություն էին կազմում արական սեռի ներկայացուցիչները, սակայն հարցմանը մասնակցածների թվում առավելություն են կազմում իգական սեռի ներկայացուցիչները, ի տարբերություն նախորդ տարվա:

1.2. Նշեք Ձեր տարիքը.





Ինչպես տեսնում ենք գծապատկերից, Ավանդական բժշկության համալսարանը թողարկել է տարբեր տարիքային խմբերի շրջանավարտներ:

Շրջանավարտների ազգային պատկանելությունը նույնպես բազմազան է (ՀՀ, Իրաք, Իրան, Հնդկաստան, Հորդանան):

1.3. Նշեք՝ ո՞ր ֆակուլտետում եք սովորել.



2022-2023 ուստարում, ինչպես նախորդ տարիներին, մեծ է «Բուժական» ֆակուլտետի շրջանավարտների թիվը, այդպես է նաև հարցվածների շրջանում:

1.4. Նշեք Ձեր մասնագիտությունը և որակավորումն ըստ դիպլոմի: Որակավորումը՝ բժիշկ «Բուժական» ֆակուլտետի հարցմանը մասնակցած 46 ուսանողների պատասխանն է, որակավորումը՝ «Բժիշկ-ստոմատոլոգ»՝ Ստոմատոլոգիայի ֆակուլտետից հարցմանը մասնակ-ցած 24 շրջանավարտների պատասխանը: Այն, ինչ ակնկալվում էր հարցման արդյունքում:

2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ

2.1. Ձեզ համար պա՞րզ էր ու հասկանալի կրթական ծրագրի նպատակը.



2.2. Ձեզ համար պա՞րզ էին ու հասկանալի կրթական ծրագրի վերջնարդյունքները (այսինքն, այն ինչ պետք է իմանայիք, կարողանայիք անել ուսումնառության ավարտին).





2.3. Դասընթացների նպատակը և խնդիրները Ձեզ ներկայացվե՞լ են հստակ.



Ինչպես երևում է հարցվածների պատասխաններից, ուսանողների մեծամասնությանը պարզ է եղել ոչ միայն կրթական ծրագրի նպատակը, վերջնարդյունքները, այլև մատուցվող դասընթացների նպատակն ու խնդիրները:

2.4. Ձեզ համար պա՞րզ էր, թե ինչ էին ակնկալում ձեզանից դասախոսները.



«Ստոմատոլոգիական» ֆակուլտետում հարցված բոլոր շրջանավարտները, իսկ «Բուժական» ֆակուլտետի հարցված շրջանավարտների 85 %-ը նշել էին, որ իրենց պարզ է եղել դասախոսների սպասելիքներն իրենցից, այսինքն, ուսանողները գոհ են եղել դասախոս-ուսանող համագործակցությունից:

2.5.Դասընթացի ծրագրում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը բավարարե՞լ է առարկայի արդյունավետ յուրացմանը.



Այս հարցի վերաբերյալ «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի հարցմանը մասնակցած շրջանավարտների պատասխանները հետևյալն են. հարցվածների 92 %-ին բավարարել է դասընթացի ծրագրով հատկացված տեսական և գործնական դասերի հարաբերակցությունը առարկայի արդյունավետ յուրացման համար, 8 %-ին մասամբ է բավարարել:



«Բուժական» ֆակուլտետի շրջանավարտներից հարցման մասնակիցների 65 %-ին է բավարարել է առարկայի արդյունավետ յուրացման համար ծրագրով հատկացված տեսական

և գործնական դասերի հարաբերակցությունը, 20 %-ին մասամբ է բավարարել, 15 %-ին չի բավարարել:

2.6. Ուսումնառությունը Համալսարանում նպաստե՞լ է տեսական գիտելիքների ձեռք-բերմանը.



«Ստոմատոլոգիական» ֆակուլտետի հարցված շրջանավարտների 96 %-ը գտնում է, որ ուսումնառությունը նպաստել է Համալսարանում տեսական գիտելիքների ձեռքբերմանը, նրանց 4 %-ը պատասխանել է, որ մասամբ է նպաստել:



«Բուժական» ֆակուլտետի հարցված շրջանավարտների 89 %-ը գտնում է, որ ուսումնա-ռությունը Համալսարանում նպաստել է տեսական գիտելիքների ձեռքբերմանը, նրանց 9 %-ը պատասխանել է, որ մասամբ է նպաստել, 2 %-ը պատասխանել է՝ ոչ: Այսինքն, այս հարցի վերաբերյալ 1 ուսանող է արտահայտել իր դժգոհությունը:

2.7. Ուսումնառությունը Համալսարանում նպաստե՞լ է մասնագիտական կարողու-թյունների և հմտությունների ձեռքբերմանը.





Չնայած հարցվածների մեծամասնությունը վերոնշյալ հարցի վերաբերյալ դրական գնահատական է տվել, այնուամենայնիվ, հարկավոր է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսումնառության արդյունքների, հատկապես՝ պրակտիկաների արդյունքների գնահատման գործընթացը:

2.8. Դասախոսներից ստացած հետադարձ կապը օգնե՞լ է Ձեզ բարելավելու Ձեր գիտելիքներն ու կարողությունները.



Հարցված շրջանավարտների 96 %-ը հաստատել է, որ դասախոսից ստացած հետադարձ կապից գոհ է, 4 %-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:



Հարցված շրջանավարտների 64 %-ը նշել է, որ դասախոսից ստացած հետադարձ կապից գոհ է, 25 %-ը պատասխանել է, որ մասամբ է օգտվել այդ աջակցությունից, 11 %-ը պատասխանել է՝ ոչ: Ընդհանուր առմամբ, կարող ենք փաստել, որ համալսարանում գործում են ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ:

2.9. Ստացե՞լ եք անհրաժեշտ աջակցություն Ձեր կրթական կարիքների վերհանման և բավարարման նպատակով.





Համալսարանում կրթական միջավայրի բարելավման նպատակով պարբերաբար ուսում-նասիրվում են ուսանողների կրթական կարիքները. բացի սոցհարցումներից կազմակերպվում են հանդիպումներ, աշխատանք ուսանողական խորհրդի հետ, տեղեկատվության տրամադրման և ուղղորդման աշխատանքներ:

2.10. Ուսումնառությունը ԱԲՀ-ում նպաստե՞լ է Ձեր կլինիկական մտածելակերպի ձևավորմանը.





2.11. Ուսումնառությունը Համալսարանում զարգացրե՞լ է Ձեր հաղորդակցական և կազմակերպչական կարողությունները.





Այս հարցի վերաբերյալ շրջանավարտների մեծամասնության պատասխանները գոհացուցիչ են, ինչը նշանակում է որ դասընթացների շրջանակում համալսարանն ապահովում է նաև ուսանողների հաղորդակցական և կազմակերպչական կարողությունների ձեռքբերումը:

2.12. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը.





Հարցման մասնակիցների մեծամասնությունը գոհ է իր անցկացրած պրակտիկայից, սակայն ունենք «Բուժական» ֆակուլտետից 11 % հարցվածների անբավարար գնահատականը:

Հավելենք, որ վերջին տարիներին յուրաքանչյուր պրակտիկայի ավարտից հետո համալսարանում անցկացվում է առցանց սոցհարցում՝ պրակտիկայից բավարարվածության գնահատման նպատակով:

2.13. Ըստ տարիների համաչա՞փ էր բաշխված ուսանողի ուսումնական բեռնվածությունը (study load՝ ուսանողի ծանրաբեռնվածությունը հասանելի՞ էր, իրատեսական էին առաջադրանքների կատարման ժամկետները, ...).





«Բուժական» ֆակուլտետում ուսումնական ծանրաբեռնվածության համաչափության վերաբերյալ հարցվածների 7 %-ն է միայն բացասական պատասխան տվել, մյուս բոլոր պատասխաններից պարզ է, որ ընդհանուր առմամբ շրջանավարտները դժգոհ չեն եղել ուսումնական ծանրաբեռնվածությունից:

2.14. Ուսումնառության ընթացքում օբյեկտի՞վ են գնահատվել ուսանողների գիտելիքները.





Բավականին բարձր է ուսանողների գոհունակությունը գնահատման համակարգի օբյեկտիվությունից, նաև նախորդ տարվա համեմատությամբ: Ընդամենը 7 % ուսանողների կողմից է եղել բացասական պատասխան:

2.15. Գիտելիքների ստուգման և գնահատման տարբեր ձևերը (գրավոր, բանավոր, առաջադրանքները, ընթացիկ ստուգումները) նպաստե՞լ են դասընթացի ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը.





Գիտելիքի ստուգման և գնահատման կիրառվող ձևերի վերաբերյալ հարցվածների մեծամասնությունը դրական է պատասխանել, այսինքն, դասախոսների կողմից ընտրված գնահատման մեթոդները նպաստել են դասընթացից ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը:

2.15. Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ գիտելիքների գնահատման համակարգը.



Ընդհանուր առմամբ գիտելիքի գնահատման համակարգի գնահատումը գոհացուցիչ է, ունենք ընդամենը 1 ուսանողի կողմից բացասական գնահատական:



2.16. Ինչպե՞ս եք գնահատում ամփոփիչ ատեստավորման գնահատականի անաչառությունը.





Ամփոփիչ ատեստավորման գնահատականի անաչառության առնչությամբ ունենք հարցվածների մեծամասնության գերազանց և լավ գնահատականները, ինչը շատ ուրախալի է:

3. <u>ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԲՀ -Ի ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ</u>

3.1. Ինչպե՞ս եք գնահատում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան (լսարաններ, լաբորատորիաներ, մասնագիտական սենյակներ, նախակլինիկական սենյակ, գրադարան, ուսումնառության այլ ռեսուրսներ).





Ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան անբավարար է գնահատվել հարցվածների միայն «Բուժական» ֆակուլտետից հարցման մասնակցած շրջանավարտների 15 տոկոսի կողմից: Ընդհանուր առմամբ, ուսանողներին գոհացրել է կրթական ծրագրի իրականացման համար առկա նյութատեխնիկական բազան:

3.2. Ինչպե՞ս եք գնահատում մասնագիտական գրականության առկայությունը գրադարանում.





Այս հարցի պատասխաններից հասկանալի է, որ ուսանողները մասնագիտական գրականությունից օգտվելու խնդիր չեն ունեցել:

3.3. Ինչպե՞ս եք գնահատում ինտերնետ ռեսուրսների առկայությունը Համալսարանում.





Հետաքրքիրն այն է, որ «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի շրջանավարտներից անբավարար պատասխան վերոհիշյալ հարցի, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ չենք ունեցել: «Բուժական» ֆակուլտետից ունեցել ենք տարբեր պատասխաններ այս հարցի վերաբերյալ. Հարցվածների ավելի քան 50 տոկոսը տվել է գերազանց և լավ գնահատականներ,

3.4. Ինչպե՞ս եք գնահատում ուսումնական լաբորատոր սարքավորումների և նյութերի առկայությունը.





3.5. Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ Համալսարանի դասավանդման մակարդակը.





Ունենք ընդամենը 1 ուսանողի կողմից տրված անբավարար գնահատական:

3.6. Ի՞նչը կոնկրետ Ձեզ չի բավարարել Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում.

- ✓ գործնական դասերը քիչ էին- 1 ուսանող
- ✓ պրակտիկաները քիչ էին -3 ուսանող
- ✓ շատ խիստ էին ուսանողների նկատմամբ-1 ուսանող
- ✓ կիրառում էին դասավանդման հին մեթոդներ -2 ուսանող
- ✓ ուսանողի ներուժը հասկանալու խնդիր կար, որոշ դասախոսներ կողմնապահություն էին անում-1 ուսանող

Նշված բաց հարցին ուսանողները տվել են նաև այնպիսի պատասխաններ, որոնք արտահայտում են նրանց գոհունակությունը.

- ✓ գերազանց դասախոսական կազմ-2 ուսանող
- ✓ ամեն բան շատ լավ էր-9 ուսանող
- ✓ չեմ դժգոհում-2 ուսանող
- ✓ ամեն ինչ բավարարել է-3 ուսանող
- ✓ դասախոսներն աշխատել են մեծ նվիրումով-1 ուսանող
- ✓ խնդիրներ չեն եղել-1 ուսանող

3.7. Գո՞հ եք արդյոք.



Բուժական ֆակուլտետ







Հատկապես վերջին տարիներին համալսարանի ՈՒԳԸ-ն և ՈՒԽ-ն ակտիվացրել են իրենց գործունեությունը, որը շատ ուրախալի է: Վարչական և դասախոսական կազմին տրված գնահատականները նույնպես խոսում են մեր համալսարանի վարչական և դասախոսական կազմի աշխատակիցների կոմպետենտության և բարեխիղճ աշխատանքի մասին:

3.8. Արդյո՞ք հստակ և թափանցիկ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները.





Ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերի և մեխանիզմների վերաբերյալ ուսանողները մշտապես տեղեկացվում են, և այս հարցի հետ կապված խնդիրներ, կարծես թե, չկան:

3.9. Կարևորո՞ւմ եք համալսարանում սովորելիս հանրակացարանի առկայության խնդիրը.





Հարցված շրջանավարտների մեծամասնությունը, հատկապես «Բուժական» ֆակուլտետի օտարազգի ուսանողները, կարևորում են հանրակացարանի առկայության հարցը:

4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4.1. Արդյոք հասանելի՞ էր Ձեզ ԱԲՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ տեղեկատվությունը.





Շրջանավարտների պատասխանները հավաստում են, որ ԱԲՀ-ն ապահովել է դիմորդներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, ինչը շարունակվում է նաև այժմ՝ ընդգրկելով ուսանողների հավաքագրման բոլոր հնարավոր տարբերակները:

4.2. Համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը համապատասխանու՞մ է իրականությանը.





5. ԱԲՀ-ՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

5.1. Որքանո՞վ եք բավարարված ԱԲՀ-ից ստացած կրթությունից.





Այս հարցին, թե որքանո՞վ եք բավարարված ԱԲՀ-ից ստացած կրթությունից, «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի հարցվածների 87 %-ը պատասխանել է ամբողջությամբ բավարարված եմ, 13 %-ը՝ ավելի քան բավարարված եմ: «Բուժական» ֆակուլտետում «ամբողջությամբ բավարարված եմ» պատասխանն ընտրել է հարցվածների 67 %-ը, «ավելի քան բավարարված եմ»՝ 22 %-ը, 4 %-ն ընտրել է «բավարարված չեմ» և «ավելի քան բավարարված չեմ» պատասխանները, իսկ 7 %-ը դժվարացել է պատասխանել:

ԱԲՀ-ն ելնելով իր առաքելությունից և ռազմավարական նպատակներից՝ մշտապես կատարելագործում է կրթական գործընթացները՝ խթանելով դիմորդների հոսքը և մրցակցությունը բուհերի շրջանակում:

5.2. Համալսարանից ստացած կրթության վերաբերյալ Ձեր մեկնաբանությունները.

- ✓ Գերազանց- 3 ուսանող
- ✓ Բարձր մակարդակի դասախոսական կազմ-1 ուսանող
- ✓ Հիանալի է-1 ուսանող
- ✓ Սովորել եմ այնպիսի բաներ, ինչը նախկինում չգիտեի /Ս.Թերեզայից տեղափոխված ուսանող/-1 ուսանող
- ✓ Հրաշալի դասախոսական կազմ և շատ ճիշտ դասավանդման մեթոդիկա- 2 ուսանող
- ✓ Ամեն ինչ արվում է ուսանողների համար գրագետ մասնագետներ կրթելու համար-1 ուսանող
- ✓ Կային որոշ առարկաներ, որոնց ուսումնասիրման կարիքը չկար-1 ուսանող
- ✓ Գերազանց կրթական համակարգ-1 ուսանող

- ✓ Շատ, շատ լավ-1 ուսանող
- ✓ Տեսական մասը լավ էր, գործնականը՝ ոչ բավարար- 1 ուսանող
- ✓ Անչափ գոհ եմ-2 ուսանող
- ✓ Ամեն ինչ կազմակերպված էր բարձր մակարդակով, ցանկացած հարցի դեպքում, այն միանգամից ստանում էր լուծում-1 ուսանող
- ✓ Ամբողջովին բավարար տեսական և գործնական գիտելիքների մատուցում-1 ուսանող
- ✓ Ես բավարարված եմ իմ ստացած կրթությունից-2 ուսանող
- ✓ Հրաշալի կլիներ, եթե կարողանայինք փոխել կլինիկայի ժամերը-1 ուսանող
- ✓ Ես շատ պրակտիկ կարողություններ չեմ ձեռքբերել- 1 ուսանող
- ✓ Շատ ավելի լավ կլիներ, եթե ապահովվեր կլինիկական փորձի ձեռքբերումը- 1 ուսանող
- ✓ Կցանկանայի շնորհակալություն հայտնել ֆակուլտետին, հատկապես դասախոսներ Հ.Ստեփանյանին, Ա.Մինասյանին, Ն.Խալաթյանին:
- ✓ Շատ օգտակար էր և ստացել եմ ավելի շատ գիտելիքներ, քան կարող էի ակնկալել-1 ուսանող
- ✓ Ապահովել կլինիկական գիտելիքները-1 ուսանող
- ✓ Խոսքեր չկան, համալսարանն արել է լավագույնը-1 ուսանող

5.3. Խորհուրդ կտա՞ք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԱԲՀ.





Ուրախալի է, որ «Ստոմատոլոգիական» ֆակուլտետից հարցման մասնակից բոլոր շրջանավարտները, «Բուժական» ֆակուլտետից հարցման մասնակից շրջանավարտների 75 %-ը պատրաստ է խորհուրդ տալ իր մերձավորներին և ընկերներին ընդունվելու ԱԲՀ, ինչը բարձր ցուցանիշ է, ինչպես և նախորդ տարվա հարցման ժամանակ տրված պատասխանը /73%/:

5.3. Նշեք ԱԲՀ-ում ստացած կրթության ուժեղ կողմերը.

- բարի դրացիական մթնոլորտ և պայմաններ, հասանելի ռեսուրսներ-1 ուսանող
- բարձր մակարդակի դասախոսական կազմ-4 ուսանող

- տեսական, գործնական գիտելիքներ-8 ուսանող
- ժամանակակից գրականություն, պրակտիկա-1 ուսանող
- տալիս է գործնական հմտություններ ձեռք բերելու մեծ հնարավորություն-1 ուսանող
- գիտելիքի լավ յուրացման արդյունքում աշխատանքը կատարում եմ առանց բարդությունների-1 ուսանող
- առանձնահատուկ ուշադրություն յուրաքանչյուրիս-1 ուսանող
- բանիմաց, պրոֆեսիոնալ վարչակազմ, մանավանդ որակի գծով պրոռեկտորը, իդեալական միջավայր-1 ուսանող
- կազմակերպվածությունը, որակի պրոռեկտորի անմիջական վերահսկողությունը և աջակցությունը տարբեր հարցերում-1 ուսանող
- շենքային ընտիր պայմանները, նյութատեխնիկական ռեսուրսների հագեցվածությունը
- Խստապահանջ ղեկավարներ, կարգապահության բարձր մակարդակ-1 ուսանող
- հայերենով և անգլերենով իրականացվող կրթական ծրագրերը-1 ուսանող
- Ուսանողների և դեկանի, որակի ապահովման գծով պրոռեկտորի հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումները-1 ուսանող
- վերահսկողությունը, կրթական ռեսուրսները, դասախոսական կազմը, որակի պրոռեկտորը-1 ուսանող
- ուսանող-դասախոս լավ փոխհարաբերություններ-2 ուսանող
- ուսանող-դասախոս լավ փոխհամագործակցություն ողջ ուստարվա ընթացքում-1 ուսանող
- աջակցող, ընկերական վարչական աշխատակիցներ-2 ուսանող

5.4. Նշեք ԱԲՀ-ում ստացած կրթության թույլ կողմերը.

- ✓ չկան-8 ուսանող
- ✓ տեսողական պրակտիկա- 1 ուսանող
- ✓ ուսման վարձի չափը, իմ կարծիքով մի քիչ բարձր է-1 ուսանող
- ✓ միջազգային պրակտիկայի բացակայություն-1 ուսանող
- ✓ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում-1 ուսանող
- ✓ շատ շոգ լսարանները – 3 ուսանող
- ✓ դասերը կլինիկաներում-2 ուսանող
- ✓ քիչ պրակտիկաները-4 ուսանող
- ✓ անգլերենին չտիրապետող վարչական աշխատակիցներ-1 ուսանող
- ✓ հետազոտությունների բացակայությունը-1ուսանող
- ✓ ոչ հարմարավետ գրադարան և բուֆետ-1ուսանող
- ✓ սակավ լաբորատոր աշխատանքներ-1 ուսանող

6. Եթե հնարավորություն ունենայիք, ապա ի՞նչը կփոխեիք բուհում.





Ինչպես նաև առաջարկվել են հետևյալ փոփոխությունները.

- WiFi գոտիների առկայություն համալսարանում-2 ուսանող
- ուսանողների ուսումնական նյութերը պահպանելու համար առցանց թղթապանակ-1 ուսանող
- օդափոխիչներ-1 ուսանող
- ճաշարան-1 ուսանող
- շատ պրակտիկ գիտելիքներ-2 ուսանող
- տալ համալսարանին կլինիկական գիտելիքներ-1 ուսանող
- ոչինչ չէի փոխի-2 ուսանող
- Վերահանձնումները լինեն անվճար-1 ուսանող

6.1. Ցանկանում եք շարունակել ուսումը.





6.2.Եթե այո, ապա՝ որտեղ.





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտների կողմից իրականացվող անկախ գնահատումները թույլ են տալիս առանձնացնել ուսումնառության ուժեղ և թույլ կողմերը տարբեր տեսանկյուններից և ժամանակին արձագանքել մի շարք ուսումնական հիմնախնդիրների, որոնք առաջանում են կրթական գործընթացների շրջանակներում և բարձրացնել ուսումնական գործընթացի որակը:

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են համալսարանում ստացած կրթությունից: Հարցվողների մեծամասնությունը՝ 77 %-ը, ընդհանուր առմամբ, ԱԲՀ-ում ստացած կրթությունից **ամբողջությամբ *բավարարված է, իսկ 18*** %-ը ***ավելի, քան բավարարված է:*** Շրջանավարտները պատրաստ են մերձավորներին և ընկերներին խորհուրդ տալ ընդունվելու ԱԲՀ:

Շրջանավարտները ստացել են բավարար մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, սակայն նրանց կողմից նշվել են տարբեր խնդիրներ, որոնց լուծման համար **առաջարկվում է՝**

1. Վերազինել լաբորատոր սենյակները նյութատեխնիկական միջոցներով՝ հաշվի առնելով ամբիոններին տրամադրվող միջոցների առաջնահերթությունը: Գործնական պարապմունքները դարձնել առավել հետաքրքիր և ինտերակտիվ, նպաստել առավել մեծ թվով ուսանողներ դասին ներգրավելուն:
2. Բարձրացնել ՈՒԳԸ, ՈՒԽ կառույցներից ուսանողների բավարարվածության մակարդակը:
3. Ստեղծել սովորողների համար ժամանցի և հանգստի համար ավելի հարմարավետ պայմաններ:
4. Ակտիվացնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվելու աշխատանքները, զարգացնել ուսանողի՝ ապագա բժշկի կոնֆերանսներում հանդես գալու կարողությունները:
5. Շարունակել գրադարանում անգլերենով մասնագիտական գրականության համալրումը՝ ապահովելով յուրաքանչյուր մասնագիտական առարկայից գրքերի առկայությունը:

ՈԱ առաջատար մասնագետ Մ.Հովսեփյան